

**«ՊՂՆՁԵ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»
ԱՐԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ**

2. Ն. ՄԿՐՏՁՅԱՆ

Հայ գրականության մեջ, ինչպես և մյուս արևելաքրիստոնեական գրականություններում, թարգմանական հուշարձանները նախորդել են ազգային գրականության ստեղծմանը՝ կարևոր դեր խաղալով վերջինիս կազմավորման գործում:

Հայ թարգմանական գրականության պատմությունն ընդունված է բաժանել հետևյալ շրջանների. ա) դասական թարգմանություններ՝ ամբողջ V դարը, բ) հունարան դպրոցի թարգմանություններ՝ V դարի վերջ—VIII դարի սկիզբ, գ) կիլիկյան շրջանի թարգմանություններ՝ XII—XIII դդ., դ) միաբարական (ոմիթոական) միջավայրի թարգմանություններ՝ XIV դար, ե) ուշ միջնադարյան թարգմանություններ՝ XV—XVIII դդ.:

Այսպիսով, VIII դարի սկզբից մինչև XI դարն ընկած ժամանակահատվածը և XV—XVI դդ. բնութագրվում են որպես թարգմանական գործունեության անկման շրջաններ Հայաստանում:

Աստվածաշունչը՝ հայ թարգմանական գրականության առաջին հուշարձանը, թարգմանվել է սկզբում ասորերենից (405—408 թթ.), այնուհետև հունարենից (432—433 թթ.)², Բացառապես ասորերենից և հունարենից էին արվում բոլոր հայերեն թարգմանությունները ամբողջ V դարի ընթացքում: Այնուհետև հայ թարգմանական գրականության մեջ սկսեցին գերակշռել հունարենից արվող թարգմանությունները, որոնք թե՛ ծավալով, թե՛ իրենց ընդգրկումով և նշանակությամբ գերազանցեցին ասորերենից կատարվածներին:

Ավելի ուշ Հայաստանում սկսեցին թարգմանություններ անել նաև արաբերենից, լատիներենից, վրացերենից և շատ այլ լեզուներից:

Հայ միջնադարյան թարգմանական գրականության մեջ արաբերենից կատարված թարգմանություններն անհամեմատ ավելի համեստ տեղ են գրավում (ինչպես ծավալով, այնպես էլ պատմամշակութային նշանակությամբ), քան ասորերենից և հատկապես հունարենից արվածները, սակայն նրանք ես, անկասկած, որոշակի գիտական արժեք են ներկայացնում: Արաբերենից կատարված թարգմանությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջնադարյան Հայաստանում թարգմանվել են մեծ մասամբ գործնական նշանակություն ունեցող երկեր՝ բժշկարաններ, անասնաբուժական ու երկրագործական ձեռնարկներ և այլն³:

Ներկայումս հայագիտությանը հայտնի է, ի թիվս միջնադարյան այլ թարգմանությունների, նաև արաբական գեղարվեստական արձակի մի քանի նմուշ, որոնք վերագրվում են հանրաճանաչ «Հազար ու մեկ գիշեր» հեքիախաշարին: Վերջինիս արաբերեն բնագրում առայժմ հայտնաբերվել են միայն «Պղնձե քաղաքի պատմության» և «Մանկան ու աղջկա պատմության» նախօրինակները⁴: Ինչ վերաբերում է մյուս նման «պատմություններին», որոնք

1 Լ. Տեր-Պետրոսյան. Հայ հին թարգմանական գրականություն. Երևան, 1984, էջ 7:

2 Ս. Արևշատյան. Հնագույն հայկական թարգմանությունները և նրանց պատմամշակութային նշանակությունը.—«Պատմա-բանասիրական հանգես», 1973, № 1, էջ 25—26:

3 А. Тер-Гевондян. Армения и Арабский халифат. Ереван, 1977, с. 264—265.

4 H. Laurentie. La version armenienne du conte de la ville d'Aïraln.—Revue des Études Arméniennes, I, 1921, p. 297—302. Ն. Անդրեյևա. Աղջկա և մանկան պատմություն.—«Բազմալեզու», № 7—8, Վիեննա, 1906, էջ 343:

նույնպես ենթադրաբար դասվում են արաբերենից արված թարգմանությունների շարքը⁵, ապա այդ հարցը դեռևս կարիք է զգում համոզիչ փաստարկների և լրացուցիչ գիտական տվյալների:

Վերոհիշյալ բոլոր «պատմություններից» մենք կանգ կառնենք միայն «Պղնձե քաղաքի պատմության» վրա:

...Շատ դարեր ի վեր Սողոմոն Իմաստունը պղնձե կոթերի մեջ է զննանել շիններին, կոթերը կնքելով իր կնիքով, որի կախարդական ուժի առջև անզոր են լար ոգիները: Եվ ահա ամեն անգամ, երբ որեւէ մեկը պատահաբար ծովի հատակից բարձրացնում է այդ անոթներից մեկը և բացում այն, բանտարկված շիններ, բարձր աղաղակելով, դուրս է փախչում:

Հսկով այն մասին, որ նման պղնձե անոթներ կարելի է ձեռք բերել հեռավոր ու առեղծվածային Պղնձե քաղաքի մոտ, խալիֆը մի ամբողջ «արշավախումբ» է ուղարկում այնտեղ:

Սակայն լսափառանց դժվար է ու վտանգավոր Պղնձե քաղաք տանող ճանապարհը: «Արշավախումբն» առաջնորդում է մի իմաստուն ծերունի: Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, ճամփորդները վերջապես հասնում են Պղնձե քաղաքին, բայց պարզվում է, որ վերջինս շրջապատված է անմատչելի պարսպով և ոչ մի դարպաս չունի: Պարսպի վրայով անցնելու բոլոր փորձերը ողբերգական վախճան են ունենում, քանի որ քաղաքը կախարդված է: Վերջապես իմաստուն ծերունին թալիսմանի օգնությամբ կարողանում է խուճրդ ներս տանել քաղաք: Պղնձե քաղաքը՝ «գեղեցիկ է և լսափառանց հարուստ, սակայն ոչ մի կենդանի շունչ չկա այնտեղ, բոլոր բնակիչները մեռած են, նրանց թվում և քաղաքի չքնաղ տիրուհին...»

...Մահի առջև անզոր է ամեն ինչ՝ թե՛ անսահման իշխանությունը, թե՛ բոլոր գանձերը, թե՛ «գեղեցկությունը, երիտասարդությունը և երջանկությունը: Ունայն է մարդկային կյանքը, ունայնություն ունայնությանց...

...«Արշավախումբը» վերադառնում է կոթերով հանդերձ և պատմում խալիֆին Պղնձե քաղաքում տեսածի մասին: Խալիֆը սաստիկ հուզվում է, համակվում աշխարհուրացության գաղափարով և նվիրվում ասպշխարհության, որովհետև համոզվում է, որ անցողիկ ու անօգուտ է և՛ իր փառքը, և՛ իշխանությունը, և՛ հարստությունը...

Այսպիսին է «Պղնձե քաղաքի պատմության» համառոտ բովանդակությունը:

«Պղնձե քաղաքի պատմությունը» պատկանում է այն զարմանալիորեն կենսունակ գրական հուշարձանների թվին, որոնք, ամենալայն ժողովրդականություն վայելելով միջնադարյան Հայաստանում, շարունակել են գրավել հայ ընթերցողի ուշադրությունը ընդհուպ մինչև XX դարը: Այդ են վկայում, մասնավորապես, «Պղնձե քաղաքի պատմության»՝ աշխարհի տարբեր գրադարաններում հանգրվանած բազմաթիվ ձեռագիր ընդօրինակությունները, ինչպես նաև մի ամբողջ շարք հրատարակությունները:

Ձեռագրերից 32-ը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (XVI—XIX դդ.)⁶, հինգը՝ Փարիզի Ազգային Գրադարանում⁷, մեկը՝ Հռոմի Ս. Վլասի հայոց հյուրանոցի գրադարանում⁸, երկուսը՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագրատանը (XVII—XVIII դդ.)⁹։ Վերջիններիս թվին պետք է ավելացնել նաև Ն. Անդրիկյանի մոտ հիշատակված «քանի մը Ոսկեփորիկները», «Երոնց ամենեն հինը 1559 թվականը կկրեն»¹⁰։ Ամենայն հավանակա-

⁵ Դրանց թվին են պատկանում, օրինակ, Փահլու թագավորի, Աբդուլաֆարի և Զեմիլայի պատմությունները և այլն:

⁶ Ձեռ. ՁԼՔ՝ 1677, 1682, 2354, 2398, 4285, 5622, 5623, 5992, 6092, 6185, 6451, 6485, 6961, 7020, 7027, 7076, 7227, 7709, 7993, 8267, 8332, 8387, 8447, 8724, 8963, 8968, 9265, 9428, 10107, 10166, 10275, 10329:

⁷ Ձեռ. ՁԼՔ՝ 185, 285, 286, 308, 309: Տե՛ս Ա. Լորանսիի նշված հոդվածը, էջ 297—302:

⁸ Ձեռ. Ձ՝ 33/24: Տե՛ս Ն. Ա. Կ. ի ն. յ. Զրույց Պղնձե քաղաքի.—«Հանդես ամսօրյա», 1958, № 1—4, էջ 22:

⁹ Ձեռ. Ձ՝ 83 և 466: Տե՛ս Ն. Ա. և դ. ի. կ. յ. ն. Նշվ. աշխ., էջ 298:

¹⁰ Ն. Ա. և դ. ի. կ. յ. ն. Նշվ. աշխ., էջ 298:

նությամբ նշված ցուցակը չի կարելի սպառփչ համարել: Պետք է ենթադրել, որ հետագա որոնումները կլրացնեն այն:

Պատկանելի թիվ են կազմում նաև «Պղնձե քաղաքի պատմության» հրատարակությունները¹¹:

Ծրկար: Ժամանակ «Պղնձե քաղաքի պատմության» հայերեն երկու տարբերակները գիտվում էին որպես «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթաշարի արաբերեն բնագրից կատարված թարգմանություններ¹²: Սակայն նորահայտ փաստերի առկայությունը ստիպում է վերանայել այդ կարծիքը:

Հայտնի է, որ «Հազար ու մեկ գիշեր» ժողովածուի մեջ ընդգրկված հեքիաթները մասամբ արաբական ծագում ունեն, մասամբ էլ փոխ են առնված այլ ժողովուրդներից՝ հնդիկներից, պարսիկներից, հրեաներից, հույներից և այլն:

«Պղնձե քաղաքի հեքիաթը» *حكاية مدينة النحاس* պատկանում է արաբական ծագում ունեցող հեքիաթների թվին և կրում է հին արաբական բանահյուսական ավանդույթի կնիքը: Այն կազմավորվել է հարավ-արաբական հրեանազուն քաղաքակրթությունների շարժառնքը հանդիսացող լեգենդների հիման վրա¹³: Ինչպես իրավամբ նշում է Վ. Վ. Լեբեդևը, այդ լեգենդները յուրօրինակ մի հուշ են ծմենի, Օմանի, Հազրամաութի հինավուրց, երբեմնի ծաղկուն քաղաքների կործանման մասին: Այդ է պատճառը, որ «Պղնձե քաղաքի հեքիաթը», ինչպես և մյուս նման հեքիաթները, տողորված են հոռետեսական տրամադրությամբ, աշխարհի ու մարդկային կյանքի ունայնության գաղափարով, բարոյախոսական-խրատական ոգով:

Ակնհայտ է, որ հենց թվարկված հատկանիշներն են որոշիչ գեր կատարել՝ հնարավորություն տալով միջնադարյան հայ թարգմանիչներին ժամանակի հայ գրականությունը հարստացնելու աշխարհուրացության ռեքլամացիայի ոգով շնչող ևս մի երկով:

Քննելով «Պղնձե քաղաքի հեքիաթը», Վ. Վ. Լեբեդևը գալիս է այն եզրակացության, որ «այդ հեքիաթում միահյուսվել են մի քանի սյուժեներ՝ Սողոմոն թագավորի (Սուլեյման իբն Դաուդի) կողմից պղնձե կժերի մեջ բանտված օրհների մասին պատմությունը, թուր կժերը ձեռք բերելու նպատակով խալիֆ Աբդ ալ-Մալիք իբն Մարվանի հրամանով կազմակերպված արշավի մասին պատմությունը, պալատի նկարագրությունը, որն ինչ-որ ժամանակ պատկանել է մի հզոր թագավորի, Սուլեյման իբն Դաուդի՝ ջինների դեմ մղած պատերազմի պատմությունը և, վերջապես, բուն լեգենդը պղնձե քաղաքի մասին: ...Քանի որ ո՛չ հրեական, ո՛չ հյուսիս-արաբական աղբյուրներում տվյալ լեգենդը վկայված չէ, կարելի է ենթադրել, որ այն ծագել է Հարավային Արաբիայում՝ Սողոմոն թագավորի մասին հրեական լեգենդների հիման վրա»¹⁴:

«Պղնձե քաղաքի պատմության» արաբերեն բնագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինս «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթաշարի մեջ է ամ-

¹¹ Հայտնի են XVIII—XIX դդ. կատարված մոտ քսան հրատարակություններ, ավելի մանրամասն տե՛ս Հ. Սիմոնյան. Հայ միջնադարյան կաֆաներ. Երևան, 1975, էջ 137, ծան. 6, էջ 138:

¹² Ն. Ա. Կիսյան. Նշվ. աշխ., էջ 23—24: Հ. Սիմոնյան. Նշվ. աշխ., էջ 136: П. М. Урадян. Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке. Ереван, 1966, с. 46—51.

¹³ Ա. Լորանսիի կարծիքով «այս հեքիաթն անվիճելիորեն արաբական ծագում ունի», սակայն ծագել է այն ուժեղ տպավորության ազդեցությամբ, որ թողել են արաբ բեդուինների վրա եգիպտական քաղաքները, որոնց համար վերջիններս հայտնություն էին: Մե՛ս Н. Laurentia. Op. cit., p. 298.

¹⁴ В. В. Лебедев. Следы южноарабской фольклорной традиции в сказках «Тысячи и одной ночи». — Народы Азии и Африки, 1973, № 1, с. 105, 107.

փոփոխվել միայն XV—XVI դդ., ծագածություն¹⁵։ Բնագրի նախնական խմբագրությունն արտացոլող ձեռագրերում այն բացակայում է։ Դրանց թվին է պատկանում, օրինակ, XIV դարի երկրորդ կեսով թվագրվող այն արաբերեն ձեռագիրը, որից իր ֆրանսերեն թարգմանությունն է արել Ա. Գալլանը¹⁶։

Նախքան «Հազար ու մեկ գիշեր»-ի մեջ ընդգրկվելը «Պղնձե քաղաքի հեքիաթը» մի քանի դար շարունակ (IX դարից սկսած) զետեղված է եղել կամ առանձին ձեռագրերի, կամ խրատաբարոյախոսական բնույթի ժողովածուների մեջ¹⁷։ Արաբերեն ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն է ունեցել այդ հեքիաթի մի քանի խմբագրություն։ Հայերեն թարգմանությունների երկու տարբերակները նույնպես հաստատում են այդ Հեռագայում «Հազար ու մեկ գիշեր»-ի մեջ է ընդգրկվել այդ խմբագրություններից ամենահայտնին։

Քանի որ «Պղնձե քաղաքի պատմության» հայերեն թարգմանությունները կատարվել են XIII դարից ոչ ուշ և, որպես կանոն, նույնպես զետեղված են խրատախոսողական նպատակամիտվածություն ունեցող ժողովածուների կամ առանձին ձեռագրերի մեջ, ակնհայտ է, որ «Պատմությունը» հայերեն է թարգմանվել դեռևս մինչև արաբերեն բնագրի՝ «1001 գիշերների» մեջ ամփոփվելը, այսինքն՝ կա՛մ որևէ առանձին ձեռագրից, կա՛մ խրատական բնույթի որևէ ժողովածուից։

Ներկայումս հայագիտությանը հայտնի է «Պղնձե քաղաքի պատմության» երեք խմբագրություն։ Դրանցից հնագույնը ուսումնասիրողների կողմից թվագրվում է X դարի վերջով և իրենից ներկայացնում է հեքիաթի թարգմանության համառոտ խմբագրությունը։ Այս խմբագրության առաջին հայտնի միակ օրինակը հայտնաբերվել և հրատարակվել է 1958 թ. Ն. Ակինյանի կողմից։ Ըստ Ն. Ակինյանի նկարագրության նրա գտած ձեռագիրը կրում է հետևյալ վերնագիրը. «Ջրուց եւ խաւսք առաջի թագաւորացն եւ իշխանացն զոր թարգմանեցին Դաւիթ կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լիզվէ»¹⁸։

Հիշյալ թարգմանության երկրորդ, ընդարձակ խմբագրությունը ներկայացված է երկու տարբերակով։ Առաջին, այսպես կոչված «նախագրիգորիսյան» տարբերակը, ըստ մի շարք ձեռագրերի հիշատակարանների¹⁹, թարգմանվել է Առաքել Անեցու (Շիրակվանեցու) կողմից 1222 թ.։ Երկրորդ տարբերակը պատկանում է բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցու գրչին, որը XV դարում «լուսածել» է Առաքել Անեցու թարգմանությունը՝ հարստացնելով այն կաֆաներով և գեղարվեստական հնարքներով²⁰։

Համեմատելով X և XIII դդ. թարգմանությունները, Պ. Մուրադյանը ցույց է տվել, որ դրանք «Պղնձե քաղաքի պատմության» տարբեր խմբագրություններ են, քանի որ դրանցից առաջինում հանդես են գալիս երկու վեզիրներ՝ Դեմետիոս և Քարիմատին անուններով, իսկ երկրորդում՝ միայն մի վեզիր՝ Ամիրաբե անունով²¹։ Հետևաբար, նույն հեքիաթը հայերեն է թարգմանվել երկու անգամ, տարբեր արաբերեն բնագրերից։

¹⁵ Նույն տեղում, էջ 110։

¹⁶ Ն. Անգրիկյան. Նշվ. աշխ., էջ 293. — Notice sur quelques manuscrits des Mille et une nuits et la traduction de Galland, par M. H. Zotenberg. — Notices et Extraits des Manuscrits de la Bibliothèque Nationale, t. XXVIII, 1re partie, Paris, MDCCCLXXXVII, p. 167—320.

¹⁷ В. В. Лебедев. Указ. соч., с. 105.

¹⁸ Ն. Ակինյան. Նշվ. աշխ., էջ 23։

¹⁹ Ըստ Ա. Լորանսի, Առաքել Շիրակվանեցու անունն են կրում Փարիզի Ազգային գրադարանի բոլոր հինգ ձեռագրերը (տե՛ս H. Laurentie. Op. cit., p. 298), ինչպես նաև Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 68 ձեռագիրը (տե՛ս Հ. Տաշյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին ի Վիեննա. Հ. Ա. Վիեննա, 1895, էջ 354)։

²⁰ Գրիգորիս Աղթամարցի, աշխ. Մ. Ավդալբեգյանի. Երևան, 1963, էջ 325։

²¹ П. Мурадян. Указ. соч., с. 45.

Այժմ ավելի հանգամանորեն քննենք X դարով թվագրվող հայերեն թարգմանության հարցը: Թարգմանության լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ավելի շուտ միջին հայերեն է, քան գրաբար, մի փաստ, որ X դարին վերաբերող նման այլ գրական հուշարձանների բացակայության պայմաններում տարակուսանքի առիթ է տալիս: Ծիշտ է, հայտնի է, որ միջին հայերենին բնորոշ բառեր և քերականական ձևեր հանդիպում են IX—X դդ. գրական հուշարձաններում ևս²², սակայն այդ դեպքում խոսքը վերաբերում է լոկալ առանձին բառերի ու ձևերի: Մինչդեռ նշված թարգմանության լեզուն այնքան հեռու է գրաբարից, որ Ն. Ակինյանն այն անվանում է «հնագույն ռամկորեն» և նույնիսկ «Տալոց նահանգի բարբառ»²³:

Նվ իրոք, թարգմանության լեզուն և շարադրանքի ոճը այնքան մոտ են խոսակցականին, որ ակամայից ստիպում են մտածել բանավոր ճանապարհով կատարված լինելու հնարավորության մասին: Սակայն համեմատությունը «Պղնձե քաղաքի հեթաթի» արաբերեն բնագրի հետ հաստատում է, որ թարգմանությունն իրոք զբաղվող ճանապարհով է կատարված:

Այսպես, հայերեն թարգմանության մեջ հանդես եկող Ամիր Մուսի անվանը արաբերեն բնագրում համապատասխանում է أمير موسى Ամիր Մուսա. ակնհայտ է, որ արաբերենի ոչ այնքան լավ իմացության պատճառով թարգմանիչը ճիշտ չի ընթերցել موسى անունը: Նույն պատճառով բառացիորեն է թարգմանված կամ, ավելի ճիշտ, առանց թարգմանության է թողնված փուլակում²⁴ արտահայտությունը, որին արաբերեն բնագրում համապատասխանում է كيزان الفقاع «գարեջրի կժեր»²⁵ բառակապակցությունը և այլն:

Համեմատության համար բերենք Պղնձե քաղաքի՝ արաբերեն բնագրից քաղված նկարագրությունը, ինչպես նաև Ն. Ակինյանի հրատարակած հայերեն թարգմանության համապատասխան հատվածը.

فبان لهم سواد عظيم وفيه نارين
متقابلة على بعد في ذلك السواد.
فقال الامير موسى للشيخ ما هذا
السواد العظيم والنارين المتقابلة.
قال له الدليل ابشر ايها الامير فهذه
مدينة النحاس فهذه صفتها عندي في
كتاب المطالب ان سورها من الحجارة
السود ولها برجين من النحاس الاندلسي.
الاصفر فيراهما الناظر كأنهما نارين
متقابلة ومن اجل ذلك سميت مدينة
النحاس قال ولم يرالوا سايرين حتى
وصلوا اليها واذا هي عالية حصينة

...և հասան ի մեծ լեռան մի եւ էրեւցաւ քաղաքն սեւագոյն. եւ երկու տեղ էրեւնար որպէս խոց:

Ասէ Ամիր Մուսին ընդ Հալեւորն, թէ Այն սեւն ինչ է:

Ասէ Հալեւորն. Պղնձի քաղաքն է. ու գրած ունիմ, որ իւր պարիսպն սեւ քար է եւ երկու պղնձի պուտճն ի վերայ դրան կայ, յորժամ արեգակն ցաթէ եւ փայլէ՝ Պղնձի քաղաքն վասն այնոր ասեն:

Նւ սկսան գնալ եւ մատեցան եւ տեսան խիստ գեղեցիկ: Նւ էր բարձրութիւն պարսպին վաթսուն կանկուն, եւ դուռն հիսուն. եւ թվէր թէ միակտոր էր պարիսպն:

²² Ա. Այտընյան. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի. Վիեննա, 1866, էջ 142—145, 161:

²³ Ն. Ակինյան. Նշվ. աշխ., էջ 22—24:

²⁴ Նույն տեղում, էջ 31:

²⁵ „Tausend und Eine Nacht“. Arabisch. Nach einer Handschrift aus Tunis. Hrsg. von M. Habicht. Bd. VI, Breslau, 1834, S. 350 (այսուհետև՝ Habicht).

شاهقة في الهوى منبوعة علو أسوارها
ثمانون ذرعا ولها خمسة وعشرون بابا
ما ينفذ كل باب إلا بحيلة وما يكون
منها بابا إلا ومن داخل المدينة...

Ասէ Ամիր Մուսին. Չեմ տեսնուլ
զայս քաղաքիս դուռն:

Ասէ Հալիւորն. Գրած ունիմ, որ հի-
սուներորդ դուռն է. տլլամով պիտի
բանալ²⁶:

Միանգամայն ակնհայտ է, որ արաբներն բնագրի և հայերեն թարգմա-
նության մեղբերված հատվածները չափազանց նման են իրար: Կասկածից
զուրս է, որ հայ միջնադարյան թարգմանիչը, որի անունը, ցավոք, մեզ չի հա-
սել, ձեռքի տակ ունեցել է «Պղնձե քաղաքի հեքիաթի» արաբական վերահիշ-
յալ տարբերակին²⁷ շատ մոտ մի բնագիր:

Նկարագրելով ձեռագիրը, որտեղ ինքը հայտնաբերել է «Պղնձե քաղաքի
պատմության» համառոտ տարբերակը, Ն. Ակինյանը նշում է, որ այն չլուծի
հիշատակարան, վասն զի վերջին թուղթեր ինկած են. այս պատճառով ալ ան-
հայտ են գրչին անունը, գրության տեղն ու տարին²⁸: Հենվելով այն փաստի
վրա, որ ձեռագրի վերնագրում հիշատակվում է Դավիթ Կուրապաղատի անու-
նը, որը «վախճանած է 1000, մարտ 31», Ակինյանը գտնում է, որ թարգմա-
նությունը կատարվել է հավանաբար 950—1000 թթ. Տայոց նահանգում և որ
թարգմանիչները «տայեցի ըլլալու են»²⁹:

Առաջին հայացքից ամեն ինչ համոզիչ է թվում, եթե միայն ուշադրություն
չդարձնենք թարգմանության լեզվին: Ըստ Ն. Ակինյանի, այն իրենից ներկա-
յացնում է Տայոց «գողտրիկ գավառաբարբառը»³⁰, Պ. Մուրադյանը նույնպես
կարծում է, որ դա Տայոց բարբառն է³¹: Ա. Տեր-Ղևոնդյանը գրում է, որ այդ
լեզուն ավելի շատ մոտ է միջին հայերենին³²:

Նախքան հետագա դատողություններին անցնելը պետք է նշել երկու հան-
գամանք. ա) Տայոց բարբառը մեզ փաստորեն ծանոթ չէ, այդ պատճառով
թարգմանության լեզուն կարելի է Տայոց բարբառ համարել միայն ենթադ-
րաբար, և բ) միջին հայերենը որպես գրական լեզու հաստատվել է XIII դա-
րում՝ այս փաստը հավաստելու են գալիս բազմաթիվ թվագրված գրական հու-
շարձաններ:

Այսպիսով, որպեսզի հակասությունները վերանան, պետք է ենթադրել, որ
կամ միջին հայերենն է XIII դարից շատ ավելի առաջ ասպարեզ իջել, կամ էլ
Ն. Անդրիկյանի հայտնաբերած թարգմանությունն արված է ոչ թե X դարում,
այլ ավելի ուշ, և որ ձեռագրի վերահիշյալ տիտղոսաթերթը, որտեղ հիշատակ-
վում է Դավիթ Կուրապաղատի անունը, սխալմամբ է ամրացվել հիշյալ ձե-
ռագրին:

Այժմ փորձենք ի մի բերել այն բոլոր տեղեկությունները, որ մեզ հայտ-
նի են Տայոց բարբառի մասին, ինչպես նաև այն փաստերը, որ մեզ ընձե-
ռում է նշված թարգմանության լեզվի հանգամանալից վերլուծությունը:

Տայոց բարբառի գոյության մասին հիշատակում է VIII դարի մատենագիր
Ստեփանոս Սյունեցին իր «Քերականության» մեջ (էջ 187)³³: Ուրեմն, X դա-
րում Տայոց բարբառն իրոք գոյություն ունի:

²⁶ Ն. Ակինյան. նշվ. աշխ., էջ 40:

²⁷ Habicht. Bd. VI, S. 343—401.

²⁸ Ն. Ակինյան. նշվ. աշխ., էջ 22:

²⁹ Նույն տեղում, էջ 23, 24:

³⁰ Նույն տեղում, էջ 22, 23:

³¹ Պ. Մուրադյան. «Պատմություն Պղնձե քաղաքի» զրույցի հայկական և վրացական
պատմների ու նրանց փոխարարերության չուրջ.—«Բանբեր Մատենադարանի», № 6, 1962,
էջ 258:

³² А. Тер-Гевондян. Указ. соч., с. 265.

Մեզ հայտնի են Տայոց բարբառի մի քանի առանձնահատկություններ. դրանք վկայված են մի քանի վրացական ձեռագրերում, որոնք թվագրվում են 978—988 թթ. և X դարի 70-ական թթ. և ստեղծված են Տառ-Կյարջեթի գավառում: Ի. Աբուլաձեն, ուսումնասիրելով այդ ձեռագրերում պահպանված հայերեն հիշատակարանները, առանձնացրել է մի շարք հնչյունական և քերականական ձևեր, որոնք բնորոշ չեն X դարի գրական լեզվին՝ գրաբարին, «Հիշատակագրությունների լեզուն օժտված է ավելի կենդանի խոսակցական հայերեն լեզվի հատկություններով, քան թե ժամանակի գրական լեզվի: Նրանց շնորհիվ հայերեն գրական լեզվի քերականական նորմաներից բացահայտում են բարբառի որոշ նշաններ թե՛ ձևաբանության և թե՛ հնչյունաբանության տեսակետից: Քանի որ այդ հիշատակագրությունները գրվել են Տառ-Կյարջեթում, հետևաբար դրանց մեջ նկատվող բարբառային երևույթները կարելի է ընդունել ժ դարի Տայքի հայերեն լեզվի—բարբառի համար իբրև բնորոշ հատկություն»³³:

Ինչպես արդեն նշվել է, «Պղնձե քաղաքի պատմության» X դարով թվագրվող թարգմանության լեզվում նույնպես հանդիպում են բարբառային ձևեր: Վերջիններիս համեմատությունը Ի. Աբուլաձեի հոդվածում քննարկվող բարբառային ձևերի հետ ցույց է տալիս, որ համընկնում են այդ բարբառային երևույթների մոտ 50 տոկոսը, ընդ որում այդ համընկնող երևույթները չի կարելի համարել որևէ կոնկրետ բարբառի բնորոշ առանձնահատկություններ, քանի որ դրանք կարելի է գտնել կը ճյուղին պատկանող ցանկացած արևմտահայ բարբառում:

Այսպիսով, նշված թարգմանության լեզուն Տայոց բարբառ համարելու փորձը կրում է խիստ պայմանական բնույթ:

Այժմ հանգամանորեն վերլուծենք թարգմանության լեզուն՝ վերջնականապես պարզելու համար, թե արդյոք այն միջին հայերենն է, թե՛ գրաբար: Ահա վերլուծության արդյունքները. տեքստում հանդիպում են՝

ա) Հոգնակիակերտ —նի և —վի մասնիկներով կազմված գոյականական ձևեր, որոնք բնորոշ են միջին հայերենին, օրինակ՝ խանութնի, ասպարնի, աղ-ջիկնի, բախըլնի, գովի, կէշէովի և այլն:

բ) Բայի անցյալ կատարյալ և ապառնի ժամանակների մի շարք ձևեր, որոնք նույնպես բնորոշ են միջին հայերենին՝ երեկ, երեստ, լսեց, ասցիր, գնալու ենք, գալու էք և այլն:

գ) Հարակատար և վաղակատար դերբայների օգնությամբ կազմված բայական ձևեր, որոնք խորթ են գրաբարին, ինչպես, օրինակ, կարդացել եմ, տեսել էր, գրած ունիմ, կապած է, շինած էր և այլն:

դ) Տեքստում հանդիպում են թուրքերեն բառեր. X դարի գրական հուշարձանի համար այդ փաստն ուղղակի անհավանական է:

ե) Թարգմանության մեջ հանդիպում է պարսե բառը (հին ֆրանս. ba-ron-ից), որը հայերենի մեջ է թափանցել XII—XIII դդ. ոչ շուտ:

զ) Գրիչն օգտագործել է օ և ֆ տառերը, որոնք, ինչպես հայտնի է, հայոց այբուբենին են ավելացվել XII դարում. ահա ևս մի ապացույց, որ ձեռագիրը ստեղծվել է XII դարից ոչ շուտ³⁵:

է) Դրաբարի համար ամենևին հատկանշական չէ այնպիսի ձևերի գործածությունը, ինչպիսիք են՝ դարտակ, պացխում, շալկող, հիմիկ, խրկել, մը-

³³ «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն դրովանդակ դրառն զեղերականս, որ պէս զԿորնայն և զՏայեցին և զԵթովպային և զԶորորդ Հայեցին և զՍպերացին և զՍիւնիս և զԱրցախայինս. ալլ մի միայն զՄիշերկրեայսն և զՈստանիկան, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան. ալլ և ազտակարք ի պատմութիւնս, զի մի վրիպեսցի անընդել գոյով լեզուացն» (տե՛ս Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. մաս Բ, Սրեան, 1951, էջ 128):

³⁴ Ի. Աբուլաձե. X դարի վրացերեն մի ձեռագրի հայերեն հիշատակագրությունները և նրանց նշանակությունը հայ բարբառագիտության համար.—«Բանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 38—39:

տիպ գնել, ժուռ գալ, շնախկնել և այլն, որոնք ընդհակառակն, շատ սովորա-
կան են միջին հայերենի համար:

բ) Բառերի ուղղագրության մեջ գգացվում է արևմտահայերենի խիստ
սուղեցությունը. այսպես, ձայնեղ լաղաձայնները խլացվում են՝ կանկնած—
կանգնած, սանալ—սանդալ, հանկիստ—հանդիստ, գնաանել—գնդանել,
պլինծ—պղինձ և այլն, մի երեույթ, որը նույնպես խորթ է գրարարին և բնո-
րոշ է միջին հայերենին և այլն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստերի լույսի ներքո մենք է եզրակացնել, որ
կամ նշված տեքստն իրենից ներկայացնում է Դավիթ Կուրապաղատի պապե-
րով X դարում կատարված թարգմանության՝ հետագայում միջին հայերենի
վերածված տարբերակը, կամ էլ նշված թարգմանությունն արվել է XIII դա-
րից ոչ շուտ, քան տիպոգրաֆերը, որտեղ հիշվում է Դավիթ Կուրապաղատի
անունը, սովյալ ձեռագրին է ամրացվել հետագայում, թյուրիմացաբար:

«Պղնձե քաղաքի պատմության» արարերն բնագրի և հայերեն թարգմա-
նության համեմատությունից պարզվում է, որ դրանք հիմնականում համընկ-
նում են՝ նախած որոշ տարբերությունների առկայությանը: Այսպես, հայկա-
կան տարբերակը սովորաբար ավելի համառոտ է, սեղւմ, մինչդեռ արարերն
բնագրում հաճախ են հանդիպում կրկնություններ և մանրամասն, երկարա-
շունչ նկարագրություններ: Սլուծեն թե՛ արարական, թե՛ հայկական տարբե-
րակներում համարյա նույնն է, չհաշված որոշ գրվագների տարբերությանը,
չափածո հատվածների և մի քանի գործող անձանց անունների որոշ անհամա-
պասարկանություններ:

Նշված տարբերությունները, բնական է, լացատրվում են այն փոփոխու-
թյուններով, որ կրել են իրենց բաղմագարյան գոյության ընթացքում թե՛ ա-
բարական, թե՛ հայկական տարբերակները: Այդանդ որոշակի գեր են խաղացել
թե՛ կրոնական պատճառները՝ համապատասխանաբար որոշ մահմեդական
կամ քրիստոնեական գունավորում հաղորդելով տեքստին և թե՛ այն, որ գրա-
վոր տեքստը, հատկապես աշխարհիկ գրականության մեջ, չէր դիտվում որպես
ինչ-որ անձնամրելի բան, այլ այն կարելի էր փոփոխել, կրճատել կամ ընդար-
ձակել, «գեղեցկացնել», «լրացումներ» ու «շակումներ» մտցնել և այլն: Դրա հե-
տևանքով թե՛ արարերն բնագրի, թե՛ հայերեն թարգմանությունը այսօր մեզ
են ներկայանում լաղսաթիվ տարբերակներով:

АРАБСКАЯ И АРМЯНСКАЯ ВЕРСИИ «СКАЗАНИЯ О МЕДНОМ ГОРОДЕ»

А. Н. МКРТЧЯН

Резюме

«Сказание о Медном городе» принадлежит к числу тех удивительно жизне-
стойких письменных памятников, которые, будучи широко распространены в сред-
невековой Армении, продолжали оставаться в центре внимания армянского читателя
вплоть до XX века. Долгое время оба армянских перевода «Сказания», датруемые
X и XIII веками, связывались с арабским оригиналом «Тысячи и одной ночи». Од-
нако вновь обнаруженные факты заставляют пересмотреть это мнение. Изучение
арабской версии «Сказки о Медном городе» показывает, что несколько веков (с
IX в.) она бытовала в самостоятельных списках и сборниках назидательного ха-
рактера и была включена в свод «Тысячи и одной ночи» лишь в XV—XVI вв. По-
скольку армянские переводы относятся к более раннему времени (не позднее

XIII в.) и, как правило, тоже представлены отдельными списками либо входят в сборники нравоучительных сочинений, то совершенно очевидно, что армянские переводы сделаны еще до включения «Сказки о Медном городе» в свод «Тысячи и одной ночи».

До сих пор ряд исследователей вслед за Н. Акиняном считали, что «Сказание о Медном городе» впервые было переведено на армянский язык в X в., основываясь на том, что в заглавии рукописи, обнаруженной Н. Акиняном, упоминается Давид Куропалат; язык перевода, изобилующий диалектизмами, считался «диалектом области Танк». Однако детальное изучение языка перевода показало, что упомянутая рукопись создана не ранее XII в., так как: а) язык перевода представляет собой скорее среднеармянский язык, чем грабар, между тем среднеармянский язык стал употребляться в качестве литературного не ранее XII—XIII вв.— это доказывает множество датированных памятников; б) в тексте встречаются буквы *օ* и *ֆ*, которые, как известно, были добавлены к армянскому алфавиту в XII в., а также слово *շիրի* (заимствовано из старофранц. *bagon* не ранее XII в.) и турецкие слова; в) тайкский диалект науке практически неизвестен: те его особенности, на которые обратил внимание исследователей И. Абуладзе, совпадают с диалектными особенностями перевода только частично (примерно на 50%), причем созвучия нельзя считать признаками какого-либо конкретного диалекта, они присущи всем западноармянским диалектам ветви «*հր*».

Таким образом, нужно либо предположить, что перевод, обнаруженный Н. Акиняном, был сделан не в X в., а позже, и заглавный лист с упоминанием Давида Куропалата был присоединен к рукописи случайно, либо считать, что до нас дошло переложение на среднеармянский язык перевода X в., действительно выполненного по заказу Давида Куропалата.